

մօտ իսկ (աստ, 28): Արտաքին ազդեցութիւնք, տեղական սովորոյթք եւ արուեստաւորին ձեռքն անգամ կրնային զանազանութիւններ մուծանել անոնց վրայ:

Երբեմն սպասները նոյն կը մնան, բայց ժամանակը կամ օտար ազդեցութիւնը կը յեղաշրջեն անոնց կոչումները՝ գլխովին նոր կամ օտար ձայներով. այսպէս՝ կրակարանը կը դառնայ ակոշք (աստ, 33). նոշագր՝ կրկայ (69, յն. $\kappa\omicron\tau\acute{\omicron}\lambda\eta\zeta\eta$ կամ $\rho\omicron\tau\omicron\lambda\eta\zeta\eta$). «տաշտն՝ քաս» (Վրդ. Թիւ. ԺԱ. աստ, 69) կամ հաւնայ (աստ, 29. Սիւ. 472, '86). նգոյրը՝ դաշտիշուն եւ շունիտ (աստ, 84). տաշտագոշրանը՝ դասպրիկ, քսիտիկ եւ շունիձ (85):

Կը պատահի՝ որ կոչումներն աղաւաղին միայն՝ անփոփոխ մնացած սպասուց վրայ. ինչպէս հին տարգալը կը լինի դրքալ (աստ, 59, 31) եւ դգալ՝ կիլիկեան թագաւորօրհնէից մէջ (Սիւ. 475). մաղրգմայն՝ մադագմայ եւ մադագմի (աստ, 67). կասկարայք՝ կասկար (36). պոյտն՝ պոշտոշ կամ պտոշկ (39):

Մերթ հին կոչումները մնալով՝ ենթակայն կը փոխուի. զոր օրինակ՝ պարզոտոր Ե դարուն ճրագարանին մէջ իւղ դնելու անօթ, միջին դարուն մզիչ է (աստ, 31). խանը երբեմն անօթ (68), յետոյ կը փո-